ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 266
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Ոսկեպար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Նոյեմբերյան համայնքի (Ոսկեպար բնակավայրը) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Ոսկեպար բնակավայրը) ներառոր միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-049-0233-0001 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքներ	11-049-0233-0001 կադաստրային ծածկագրով 0.25 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների՝ հանգստի համար նախատեսված հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Տեղեկացնում ենք, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհա անվտանգության տեսչական մարմինը հողամասի նպատակային նշանակության փոփոխությ վերաբերյալ առարկություններ չունի՝ ՀՀ կառավարության N912-Ն որոշման 33.2-րդ կե պահանջի պահպանման պարագայում: